Դատական Գործ N: ԵԴ2/41477/02/23

Երևանի քաղաքացիական դատարան

Նոր քաղաքացիական գործ	
Հայցադիմումը /դիմումը/ ստացվել է:	04-12-2023
Հայցվոր/դիմող	
Անվանում:	Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ
Հասցե:	ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Պատասխանող	
Անվանում:	Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն
Հասցե:	ք. Երևան, Սայաթ-Նովայի պող. 40 շենք
Ինքնուրույն պահանջ ներկայացնող:	
3-րդ անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Պահանջ:	Տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին
Հիմնական պահանջի վիճակագրության տողի համարը:	13
Լրացուցիչ պահանջի վիճակագրության տողի համարը:	
Իրավական բարդության չափանիշ:	
Պահանջն անհատականացնող տվյալ:	
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Ստացման եղանակ:	Փոստով
Իրավասու անձ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Այլ նշումներ:	
Պետական տուրք	
Անդորրագիրը/Միջնորդությունը դատարան ներկայացնելու ամսաթիվ:	04-12-2023
Ներկայացվել է:	Անդորրա(գրեր)գիր
Վճարված պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	20000
Պետ. տուրքի վճարման ամսաթիվը:	01-12-2023

Պետ. տուրքի վճարման անդորրագրի համարը:	2011-7675-7030-6958-6097
Այլ նշումներ:	
Մակագրել	
Ամսաթիվ:	04-12-2023
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Երևանի քաղաքացիական դատարան
Դատավորի անուն:	Կիմա Վաչագանի Արզումանյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Երևանի քաղաքացիական դատարան
Դատավորի անուն:	
Ընդունվել է վարույթ *Ստեղծման ամսաթիվ:2023-12-14 10:39:46 Խմբագրման ամսաթիվ:2023-12-14 10:39:46*	
Որոշման ամսաթիվ:	14-12-2023
	Ստեղծման ամսաթիվ: 2023-12-14 10:39:46
Որոշման բովանդակություն:	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/41477/02/23 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ 14 դեկտեմբերի 2023թ. ք. Երևան Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր Կ. Արզումանյան) (այսուհետ՝ Դատարան), քննելով ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ընդդեմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին, քաղաքացիական գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը, Պ Ա Ր Զ Ե Ց Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումը 04.12.2023 թվականին մակագրվել է Դատարանին: Հայցադիմումը՝ կից փաստաթղթերով, Դատարանի աշխատակազմին է հանձնվել 05.12.2023 թվականին: Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված պահանջների պահպանմամբ, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 121-րդ, 122-րդ, 124-րդ, 125-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝ Դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Հայցադիմումն ընդունել վարույթ: Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

	ԴԱՏԱՎՈՐ Կ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Այլ նշումներ:	
Պարզեցված վարույթ	
Ամսաթիվ:	
Պարզեցված վարույթ:	Ոչ
Որոշումը:	
Այլ նշումներ:	
Անավարտ գործեր	
Հաշվետու ժամանակահատված:	2023 թվական
Տեսակը:	Անավարտ գործեր, որոնք գտնվում են քննության փուլում
Այլ նշումներ:	
Դատական ակտի հրապարակման օր	
Ամսաթիվ:	16-01-2024
Այլ նշումներ:	
Գործի վարույթը կարճվել է	*Ստեղծման ամսաթիվ:2024-01-16 15:57:49 Խմբագրման ամսաթիվ:2024-01-16 15:57:49*
Ամսաթիվ:	16-01-2024
Հոդված	
Հոդված	151,182-183,193
Կարճման հիմքը:	Դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը
Այլ նշումներ:	
Օրենսգիրք:	Քաղաքացիական դատավարության օրենսգիրք
Հակընդդեմ հայցի լուծման ամսաթիվ:	
Հակընդդեմ հայցի լուծումը:	
Դատական ակտ	*Ստեղծման ամսաթիվ:2024-01-16 15:58:16*
	Ստեղծման ամսաթիվ: 2024-01-16 15:58:16
Դատական ակտ (վճիռ, որոշում):	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/41477/02/23 Վ Ճ Ի Ռ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ 16 հունվարի 2024թ. ք. Երևան Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (դատավոր Կ. Արզումանյան) (այսուհետ՝ Դատարան), քննելով ըստ հայցի «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (պետական գրանցման համար՝ 211 171 01863, գտնվելու վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ) ընդդեմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովայի պող., 40 շենք)՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1.ԳՈՐԾԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.
Դատարանի 14.12.2023 թվականի որոշմամբ վարույթ է ընդունվել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հայցն ընդդեմ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ տեղեկատվություն տրամադրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:
Սույն քաղաքացիական գործով 09.01.2024 թվականին կողմերը դատարան են ներկայացրել հաշտության համաձայնություն, որը նույն օրը հանձնվել է դատավորի աշխատակազմին:

2. ՀԱՅՑՎՈՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ.
Հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչը 11.01.2024 թվականին միջնորդություն է ներկայացրել դատարան՝ հաշտության համաձայնությունը հայցվորի և հայցվորի ներկայացուցչի բացակայությամբ քննելու վերաբերյալ, որով հայտնել է, որ թիվ ԵԴ2/41477/02/23 քաղաքացիական գործով կնքվել է հաշտության համաձայնություն:
Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասը՝ միջնորդել է հաշտության համաձայնությունը քննել հայցվորի և հայցվորի ներկայացուցչի բացակայությամբ:

3.ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ.
Պատասխանող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչը 09.01.2024 թվականին դիմում է ներկայացրել դատարան, որով հայտնել է, որ կողմերը եկել են համաձայնության՝ վեճը հաշտության համաձայնությամբ լուծելու վերաբերյալ:
Վկայակոչելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասը՝ միջնորդել է հաշտության համաձայնությունը քննել գործին մասնակցող անձանց բացակայությամբ:

4. ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՏՃԱՌԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄԸ.
Դատարանը, քննարկելով կողմերի միջև կնքված հաշտության համաձայանությունը, գնահատելով գործում եղած բոլոր ապացույցները, գտնում է, որ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը ենթակա է հաստատման, իսկ քաղաքացիական գործի վարույթը՝ կարճման, հետևյալ պատճառաբանությամբ.
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող անձինք դատավարության ցանկացած փուլում կարող են գործն ավարտել հաշտության համաձայնությամբ, որը ձևակերպվում է գրավոր, ստորագրում են գործին մասնակցող անձինք և ներկայացվում է դատարանի հաստատմանը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանը հաշտության համաձայնությունը քննարկում է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց մասնակցությամբ, եթե վերջիններս չեն միջնորդել հաշտության համաձայնությունն իրենց բացակայությամբ քննարկելու վերաբերյալ (...):
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատարանը չի հաստատում հաշտության համաձայնությունը, եթե 1) այն հակասում է օրենքին կամ այլ իրավական ակտերին, 2) խախտում է այլ անձի իրավունքները կամ օրինական շահերը, 3) պարունակում է այնպիսի պայմաններ, որոնք թույլ չեն տալիս որոշակիորեն պարզել հատկացվող գումարի չափը, հանձնման ենթակա գույքը կամ այն գործողությունները, որոնք կողմը պարտավոր է կատարել, 4) պարունակում է այնպիսի պարտավորություններ, որոնց կատարումը պայմանավորված է մյուս կողմի պարտավորության կատարմամբ:
Վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ կողմերի իրավունքն է դատավարության ցանկացած փուլերում գործն ավարտել հաշտության համաձայնությամբ (տես «Կոնվերս բանկ» ՓԲԸ-ն ընդդեմ Մարիենե Նազարյանի, Վահան և Սամվել Ավետիսյաններիմասնակցությամբ՝ Նոր-Նորք վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ ամուսնալուծության և տեսակցության կարգ սահմանելու պահանջների մասին, Մարիենե Նազարյանն ընդդեմ բանկի, երրորդ անձինք Վահան և Սամվել

Ավետիսյանների՝ պայմանագրերն անվավեր ճանաչելու պահանջի մասին թիվ ԵՇԴ/0700/02/12 գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հուլիսի 18-ի որոշումը):
Վերոնշյալ հոդվածից հետևում է նաև, որ քաղաքացիական դատավարությունում կողմերը տնօրինչականության սկզբունքից ելնելով օժտված են մի շարք տնօրինչական լիազորություններով, որոնց միջոցով վերջիններս կարող են ազդել գործի ընթացքի վրա: Այդպիսի լիազորություն համարվում է կողմերի՝ հաշտության համաձայնությունը: Միաժամանակ օրենսդիրը նախատեսել է, որ կողմերի՝ նշված տնօրինչական գործողությունները պետք է իրականացվեն որոշակի սահմաններում, այն է՝ հաշտության համաձայնությունը չպետք է հակասի օրենքին և այլ իրավական ակտերին կամ խախտի այլ անձանց իրավունքները և օրինական շահերը:
Սույն քաղաքացիական գործով 09.01.2024 թվականին կողմերը դատարան են ներկայացրել հաշտության համաձայնություն:
Դատարանը գտնում է, որ կողմերի միջև կնքված և Դատարան ներկայացված հաշտության համաձայնությունը ենթակա է հաստատման, քանի որ այն չի հակասում օրենքին կամ այլ իրավական ակտերին, չի խախտում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ դատարանը կարճում է գործի վարույթը, եթե դատարանը հաստատել է կնքված հաշտության համաձայնությունը:
Այսպիսով՝ սույն քաղաքացիական գործի վարույթը ենթակա է կարճման՝ կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտով լուծվում են նաև դատավարության մասնակիցների միջև դատական ծախսերի բաշխման և հայցի ապահովման միջոցների վերացման հարցերը:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հաշտության համաձայնություն կնքելիս գործին մասնակցող անձինք անդրադառնում են դատական ծախսերի բաշխմանը, այդ թվում նաև ներկայացուցիչների ծախսերի հատուցման հարցին:
Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե հաշտության համաձայնություն կնքած անձինք դատական ծախսերը բաշխելու հարցը չեն կարգավորել հաշտության համաձայնությամբ, ապա դատարանը հաշտության համաձայնություն կնքած անձանցից դատական ծախսերը բռնագանձում է հավասարաչափ:
Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ հաշտության համաձայնությամբ կողմերն անդրադարձել են դատական ծախսերի բաշխմանը, ուստի Դատարանը գտնում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 151-րդ, 182-րդ, 183-րդ և 193-րդ, հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Հաստատել «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության միջև կնքված հաշտության համաձայնությունը՝ հետևյալ բառացի շարադրանքով.

« Հ Ա Շ Տ Ու Թ Յ Ա Ն Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ու Թ Յ Ու Ն

ք. Երևան 08 հունվարի, 2024 թվական

Սույն հաշտության համաձայնությունը կնքվել է թիվ ԵԴ2/41477/02/23 քաղաքացիական գործով հայցվոր «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Հայցվոր) և պատասխանող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (այսուհետ՝ Պատասխանող) միջև՝ ստորև շարադրվածի վերաբերյալ:
1. Հայցվորն ու Պատասխանողը համաձայնվել են թիվ ԵԴ2/41477/02/23 քաղաքացիական գործով վեճը լուծել հաշտությամբ՝ ստորև շարադրված

	պայմաններով. 1.1. Պատասխանողը սույն հաշտության համաձայնության ստորագրման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայցվորին տրամադրում է Պատասխանողին 2023 թվականի սեպտեմբերի 11-ին ուղղված իր թիվ 351-68 գրությամբ հայցվող և հայցադիմումով պահանջվող տեղեկատվությունը: Տեղեկատվությունը Հայցվորին տրամադրվում է foi@foi.am էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: 1.2. Պատասխանողը սույն հաշտության համաձայնության ստորագրման պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայցվորի՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ բանկում 1570003452540400 հաշվեհամարին փոխանցում է 20000 ՀՀ դրամ՝ որպես Հայցվորի կողմից «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով վճարված պետական տուրքի փոխհատուցում: 2. Հայցվորը հրաժարվում է Պատասխանողի հանդեպ հայցապահանջից և փաստաբանական ծառայությունների մատուցման հետ կապված ծախսերի փոխհատուցման պահանջից: 3. Սույն հաշտության համաձայնությունն ուժի մեջ է մտնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից հաստատվելու դեպքում: Հայցվորի՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Շուշան Դոյդոյան ստորագրություն Պատասխանող՝ «Քաղաքացիական պայմանագիր կուսակցության» ներկայացուցիչ Եվա Առաքելյան ստորագրություն»: 2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված: 3. Քաղաքացիական գործի վարույթը, կողմերի միջև կնքված հաշտության համաձայնությունը հաստատելու հիմքով, կարճել: Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում: Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին: ԴԱՏԱՎՈՐ Կ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ Վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ _____թ.: ԴԱՏԱՎՈՐ Կ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Դատական ակտի ամսաթիվը:	16-01-2024
Ակտով հօգուտ պետ. բյուջեի բռնագանձման ենթակա պետ. տուրքի չափը (ՀՀ դրամ):	0
Այլ նշումներ:	